ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

Գ. ՏԱՐԻ
1984

HROMGLA

YEAR BOOK

WESTERN PRELACY OF THE
ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

THIRD YEAR 1984

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԳԾԵՐՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Հայ ժողովրդի առասպելները, ինչպէս հինաւուրց բոլոր ժողովուրդների մէջ, ստեղծագործութիւնն են իր իսկ ժողովրդի եւ արդիւնքը նրա նախնական աշխարհընկալման կարողութեան, նրա երեւակայութեան, շրջապատի եւ ընդհանրապէս բնութեան երեւոյթների հասկացողութեան: Այլ խօսքով՝ առասպելները արտացոլում են ժողովրդի նախնական կեանքն ու կենցաղը՝ հաւատալիքներ, նախապաշարումներ, ընկերային յարաբերութիւններ, ազդեցութիւններ հարեւան ժողովուրդների քաղաքակրթութիւնից: Հայ ժողովրդի առասպելները ընդգրկում են այս բոլորը եւ դեռ աւելին, որպէս ուրոյն յատկանշական գիծ, կրում են դրոշմը հայ ժողովրդի հնագոյն քաղաքակրթութեան, դրոշմը հայ ժողովրդի ազատութեան տենչանքների: Մանուկ Աբեղեանը իրաւացիօրէն այն կոչում է հայ քաղաքական պայքարի մաքառումի դրականութիւն: Քաղաքական պայքարի այս գաղափարախօսութիւնը ատաղձն է կազմում մեր բանահիւսութեան՝ Հայկ ու Բելի պատերազմից մինչեւ Սասունցի Դաւթի ու Մսրա Մելիքի մենամարտերը: Հայ ժողո-

վերդի առասպելների մէջ նկատւում է մի յատուկ ճիգ հայ դիւցազուններին ներկայացնելու դրական յատկանիշներով՝ քաջ, անվեհեր, հայրենասէր, հզօր ու բարի, իսկ հակառակորդին՝ թոյլ, վեհերոտ, անգութ. բայց սա որոշ չափով կայ նաեւ ուրիշ ժողովուրդների մէջ: Այս բոլորից ելնելով կարելի է եզրակացնել, որ հայ ժողովրդի առասպելները իրենց բովանդակութեամբ համաշխարհային են, իսկ արտայայտչաձեւով՝ ազգային:

Կարողանալ լաւագոյնս ըմբռնելու համար հայ ժողովրդի առասպելները, նրանց ոգին ու նրանց մէջ արձագանգող գաղափարաբանութիւնը, պիտի ուսումնասիրենք նրանց ստեղծման միջավայրն ու պայմանները, պիտի հետեւենք նրանց կրած զանազան ազդեցութիւններին, պիտի ուրուագծենք այն յատկանիշները, որ ընդհանրական բնոյթ են կրում նրանց մէջ: Բայց նախ տեսնենք թէ ինչպէ՛ս եւ ի՛նչ աղբիւրներից են մեզ փոխանցուել առասպելները:

ԱՂԲԻՒՐՆԵՐ ԵՒ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ ժողովրդի առասպելների ամենահարուստ աղբիւրը Մովսէս Խորենացին է: Նրա պատմութեան մէջ ենք գտնում յիշողութիւններ հին առասպելներից կամ պատառիկներ ուղղակի բերուած. Ագաթանգեղոսը, Փաւստոս Բիւզանդը, Սեբէոսը եւ որոշ չափով էլ Թովմա Արծրունին կա՛մ կրկնում են նրան, կա՛մ որոշ դրուագներով յաւելում կատարում նրա յիշատակած նիւթերի վրայ: Դժբախտաբար Խորենացու կամ միւս պատմաբանների ուղղակի յիշատակումները շատ քիչ են. մեծ մասամբ նրանք իրենց ձեւով պատմում են ա՛յն ինչ որ լսել են, այդու մեր առասպելների գեղարուեստական արժէւորումը չափազանց դժուար է. յամենայն դէպս դա այս յօդուածի նիւթն էլ չէ. այստեղ մեզ հետաքրքրում է մեր առասպելների գաղափարախօսութիւնն ու ոգին:

Մովսէս Խորենացին, լինելով բարեպաշտ քրիստոնեայ, այնուամենայնիւ յիշատակել է նաեւ մեր ժողովուրդի հեթանոս շրջանի բանահիւսութիւնը՝ Գողթան երգերը, Լալեաց երգերը, առասպելները եւայլն, որովհետեւ դրանք էին հնագոյն պատմութեան միակ աղբիւրը: Դարձեալ ելնելով իր

քրիստոնէական աշխարհայեացքից, կրօնական մօտեցումով եւ հայ ժողովրդի հնագոյն պատմութիւնը իրականութեան հետ հաշտեցնելու մտահոգութեամբ, աշխատել է փոփոխութեան ենթարկել առասպելները եւ մանաւանդ քրիստոնէական մեկնաբանութեամբ բացատրել նրանց զարմանահրաշ տարրերը: Օրինակ, ժխտել է յարալէզների մեռած Արա Գեղեցիկին կենդանացնելու աւանդութիւնը. դա կը հակասէր քրիստոնէական հասկացողութեան. (այս դէպքում սակայն Թովմա Արծրունին բերում է առասպելը անփոփոխ). կամ թէ օրինակ Հայկ դիւցազնին, քրիստոնէական ըմբռնումով պատմական հիմքերի վրայ դնելու համար, կապակցել է Բաբելոնի աշտարակի կառուցման հետ:

Առասպելները, ըստ հէնց Մովսէս Խորենացու, եւ վկայութեամբ նաեւ այլ պատմաբանների, ժողովրդի մէջ ապրել են բերնէ բերան փոխանցուելով. գուսանները պատմել են դրանք կամ փանդիռի ընկերակցութեամբ երգել: Պարզ է որ առասպելների ստեղծումից մինչեւ Ե-րդ դարի վերջերը, երբ Մ. Խորենացին գրի է առել դրանք, դարեր են անցել եւ այդ դարերի ընթացքում առասպելները բերնէ բերան պատմուելով փոփոխութիւններ են կրել, տարբերակներ գտել, ժամանակների նորութիւններով զարդարուել, կրճատուել, հարստացել, կամ ձեւափոխուել. բայց եւ մէկ երեւոյթ յատկանշօրէն մնացել է նոյնը (կամ գուցէ եւ աւելի ու աւելի է խորացել) եւ դա հայ ժողովրդի ազգային ձգտումների դրոշմն է իր ստեղծած առասպելների վրայ:

ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ինչպէս ասացինք, առասպելները հայ ժողովրդի նախնական մտապատկերների, կենցաղի, հաւատալիքների ու երեւակայութեան արգասիքն են, որ զարդարել են մի հեռաւոր պատմական յիշողութիւնները եւ այդպէս բերնէ բերան պատմուելով ապրել են մեր նախնիքների մէջ: Եւ ահա ազդակները, որոնք տիրել են միջավայրը եւ ստեղծել պայմանները առասպելների ստեղծագործման՝

ա.– Մարդու նախնական ըմբռնումներն ու մտապատկերները բնութեան երեւոյթների նկատմամբ, որ առաջացրել է վախ, ակնածանք եւ պաշտամունք տիեզերական անհասկանալի եւ անտանաչելի ուժերի. ահա Վահագնը որպէս անձնաւորումը կայծակի ու փոթորիկի, բնութեան երեւոյթների քառսային արգանդի շքեղագոյն ծնունդով:

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր եւ ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղէգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

Վահագնի ծնունդը հայ ժողովրդի բանահիւսութեան այն հազուագիւտ պատառիկներից է, որ Խորենացին յիշատակել է անփոփոխ:

բ.– Զարի եւ Բարու ըմբռնում, որ բացատրուել է լոյսի եւ մթան հակադրումով, որին մարդը անձնաւորել է աստուածների ու չարքերի մէջ: Եւ Հայկը պաշտուել է որպէս բարի աստուած:

գ.– Նախնական հաւատալիքներ, պարիկներ, քաջքեր, գերապրուկներ, որոնք իրենց հետ բերել են զանազան հասկացութիւններ եւ աղօթքներ՝ հիւանդութիւններ բուժելու, չարը խափանելու: Եւ այս հասկացութիւններն էլ հիմք են ծառայել Արա Գեղեցիկի հոյակապ առասպելի մանրամասնութիւնների: Չէ՞ որ հայրենիքի ազատութեան համար կռուող զինուորները երբ պատերազմի դաշտում ընկնում են մեռած, յարալէզները նրանց լիզելով կենդանացնում են:

դ.– Օտարամուտ կրօնական հասկացութիւններ եւ օտար աստուածների պանթէոն, որ ազդել են հայ ժողովրդի աստուածներին վերագրումների մէջ եւ դիցաբանութեան ճամբով իրենց զուգահեռականութիւնը ստեղծել հայ առաս-

պելների դիւցազունների հետ։ Ահա Հայկ Դիւցազնը՝ քաջ որսորդ, ինչպէս Օրէոնն էր, նրա պատերազմը Բէլի դէմ յար եւ նման եբրայական Դաւթի եւ Գողիաթի, պարսկական Սամի եւ Քերքուքի պատերազմներին. եւ կամ Վահագնը՝ Հերքիւլէսին նման յատկութիւններով. իսկ Տորքը՝ պարսկական Ռոստամի պէս եղունգներով արձան քանդակող։

ե.– Թոթեմիզմ, պաշտամունք կենդանիների, որոնց սերունդն էին համարում զանազան կիսաստուածներ ու դիւցազներ, կամ թէ այդ կիսաստուածներին վերագրում կենդանական բնաւորութիւններ։ Օրինակ՝ Երուանդի առասպելի մէջ Երուանդի եւ Երուազի մայրը ցուլից է ծնում իր երկուորեակներին. կամ Սանատրուկին մի ինչ որ ճերմակ գազան է կերակրում։

զ.– Նախնիների եւ մանաւանդ հոգիների պաշտամունք, որից գալիս է նաեւ հօր պաշտամունքը՝ նահապետական ընտանիքների հիմքը։ Ահա Հայկը, որին պաշտել են իբրեւ հայր նախնի։

Այսպիսի նախնական հասկացութիւնների մթնոլորտում ստեղծուած առասպելները հարկաւ պիտի կրէին այդ հասկացութիւնների դրոշմը եւ զարդարուէին այդ հասկացութիւններից առաջացած, վառ երեւակայութիւններով բանուած, գեղեցիկ մանրամասնութիւններով։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ

Յատկանշական գծեր կան, որոնք առասպելները զանազանում են իրարից, բայց եւ բերում մէկ ընդհանուր համակարգի մէջ են դնում դրանց, եւ դեռ աւելին, ազգային զոյն ու նկարագիր են պարգեւում այլապէս համամարդկային այդ առասպելներին։

ա.– Պատմական մի յիշողութիւն որպէս հիմք եւ աղբիւր առասպելի։ Հայկին ուժող հպատակեցնող Բելը միթէ հզօր արքան չէ՞ր, որ պատերազմ մղեց ըմբոստ հայերի դէմ, բայց յաղթութիւն կրեց ու հայը պաշտեց Հայկին որպէս իր ազատարարը բռնակալութիւնից, կամ առասպելական Արամը Ուրարտուի արքայ Արամէն չէ՞ր, որ Ասորես-

տանի Սալմանասար Բ.ի հետ անդադար պատերազմելով երկրի ամբողջականութիւնն էր ձգտում պահպանել, Արա Գեղեցիկը, որ իր հայրենիքն ու ընտանեկան պատիւը աւելի բարձր դատեց քան փառք ու հարստութիւն, քան օտարի գահ:

բ.- Աշխարհագրական անուններ առասպելներին կապուած. Հայ ժողովրդի առասպելները, որպէս պատմական դէպքերի յիշողութիւններ, վերագրուած են վայրերի, ուր հաւանօրէն տեղի են ունեցել այդ դէպքերը եւ ուր այդ յիշողութիւնները աւելի վառ են մնացել եւ պատմութիւնները պատմուել են աւելի կենդանի, աւելի զարդարուն: Այս աշխարհագրական վայրերը աւելի են հաւաստիացրել տուեալ առասպելի իրականութեան հետ ունեցած կապը, օրինակ՝ Հարք, Հայկավանք, Հայոց Ձոր, Գերեզմանք, Բելի ուղտեր, վայրեր են Հայկ ու Բելի առասպելը յիշեցնող. կամ Լէգքը, Արայի Լեռը, Արալէզը Արայի եւ Շամիրամի առասպելն են յիշեցնում:

գ.- Ձարմանահրաշ տարրեր, որոնք կրկնւում են հայ եւ օտար առասպելների մէջ եւ զուգահեռականութիւններ ստեղծում. այս տարրերը մեծ մասամբ համաշխարհային են եւ ազգային բնոյթ չունեն. օրինակ՝ Հայկի կամ Տորքի ուժգին քայլերից գետնի դողալը, որի նմանը տեսնում ենք նաեւ Շահնամէի մէջ Ռոստամին վերագրուած. կամ հէնց դարձեալ Ռոստամին վերագրուած եղունգներով քարեր տաչելը, որ կրկնուած է նաեւ Տորքի համար: Թշնամու առաջքն առնելու համար Տորքի ժայռեր ձոր գլորելը, որ տեսնում ենք նաեւ Ողիսականի մէջ: Վահագնի վիշապների հետ կռուելը նաեւ հնդկական Ռիգ-վեդայի քաջագործութիւններից է եղել:

Հայ ժողովրդի առասպելները իրենց համամարդկային բնոյթով եւ ազգային խորը գծերով մի հինաւուրց ժողովրդի հոգեկան մշակոյթի ամենահին վկայութիւններն են, այդ ժողովրդի ձեւաւորման, նրա ազգային նկարագրի կերտման ամենահին դրսեւորումը:

Առասպելները վկայութիւններն են այն պայմանների, այն մթնոլորտի, որի մէջ կոփուեց հայի նկարագիրը:

Առասպելները ակունքն են անվերջանալի այն աղբիւրի, որ հոսում է երեք հազար տարիներ շարունակ ու իր յաւիտենական ալեակներով սերնդէ սերունդ է փոխանցում հայ

ժողովրդի ազգային գաղափարախօսութիւնը, մարտունակ ոգին, ապրելու եւ յարատեւելու վճռականութիւնը· գաղափարախօսութի՛ւն, որ նկարագիր է դարձել ու չի թուլանում, սպիտակ ու կարմիր ջարդերի զոհ չի գնում, այլ խտանում, անխախտելի ուժ է դառնում:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Մանուկ Աբեղեան, «*Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն*», (*Գիրք Առաջին*), *Երեւան*, 1944:

Մանուկ Աբեղեան, «*Երկեր*», *Հատոր Ա.*, *Հայ Վիպական Բանահիւսութիւն*, *Երեւան*, 1966:

Առաքել Առաքելեան, «*Հայ Ժողովրդի Մտաւոր Մշակոյթի Զարգացման Պատմութիւն*», *Երեւան*, 1959:

Շաւիղ Գրիգորեան, «*Հայոց Հին Գուսանական Երգեր*», *Երեւան*, 1971:

Աբրահամ Զամինեան, «*Պատմութիւն Հայ Գրականութեան*», *Նոր Նախիջեւան*, 1914:

Գարեգին Զարբհանալեան, «*Պատմութիւն Հայերէն Դպրութեանց*», *Վենետիկ*, 1934:

«*Հայ Ժողովրդի Պատմութիւն*», *Հատոր* 1, *Երեւան*, 1971:

Մկրտիչ Մկրեան, «*Հայ Հին Գրականութեան Պատմութիւն*», *Երեւան*, 1976:

Lecture Notes of Armenian 150 a & b, ''Survey of Armenian Literature'', by prof. A. Sanjian, UCLA.

Zabelle Boyajian, ''Armenian Legends and Poems'', London, 1953.

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ